1607·

Եղեւ գրաւ սուրբ գանձարանիս յամի շրջագայութեան արամազեանս տոհմի հայկական սեռի արեթական տումարի ի ԻԱ յոբելինի և հինգերորդ յաբաբարդի, սեպտեմ. ամսոյ հինգերորդի, օրն ուրբաթի, ի հայրապետութեան Ս. Էջմիածնայ Տեառն Տէր Գրիգորի, և ի յառաջնորդութեան այսմ նահանգի Տեառն Տէր Կարապետ քաջ բարունապետի, ի յաշխարհս Իլխաց, ի քաղաքս Կամենից, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Նիկողայոս հայրապետի. Յոանգաց ազգի թագաւորութեան Գ. Զիկմունդին։ Արդ գրեցաւ այս սուրբ գանձարանս ձեռամբ մեղսաներկ և անհմուտ անարժան անծան և անծնող գրչի ȯȯȯ ȯ ȯȯ ȯȯȯ ȯ ի (Յակոբի) սուտանուն սարկաւագի, որդի Տէր Գրիգորի, չարութեամբ լցեալ և մեղօք տարածեալ։.. Որոյ փափագող եղեալ քաջ բարունապետն մեր Տէր Կարապետ արքեպիսկոպոս՝ հմուտ և տեղեակ աստուածայնոց հին և նոր կտակարանաց... ետ գրել զսա յիւր արդար և քրիստոնեական վաստակոց։... [Աղվոռամեկն. առ Մխիթար. Վիենայ]։

1607·

Եղեւ գրաւ սուրբ գանձարանիս որ կոչի Աւետարան, յամի շրջագայութեան արամազեան տոհմի հայկազեան սեռի արեթական տումարի ի ԻԱ յոբելինի և հինգերորդ յաբաբարդի, սեպտեմ. ամսոյ ԻԷնի, օրն շաբաթ մուտ կիրակի։ Արդ գրեցաւ սուրբ աւետարանս ի մայրաքաղաքն Կամենից, յերկիրն Ռուզաց և Իլխաց, ի հայրապետութեան Տեառն Տէր Գրիգոր երջանիկ կաթողիկոսին Ուրհայեցոյ, և առաջնորդութեան երկրիս Տէր Կարապետ երջանիկ վարդապետին, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին և Ս. Նիկողայոսին. ձեռամբ անարժան և մեղօք զառածեալ Ղազար լոկ անուն եպիսկոպոսիս Թոխաթեցւոյ, ի խնդրոյ աստուա՝ասէր առնս Պարոն..... Եւ եղ յիշատակ իւրն և իւր ննջեցելոցն... Խնդրեմ ի ձեզնէ չմեղադրիք վասն խոշորութեան կամ սղալանաց գրչիս. քանզի յոյժ կարի հիւանդ էի ի սըրտէցաւէ. վասն այսորիկ յոյժ լալագին դիմաք աղաչեմ որ յետ ցինանցն աւետարանացն Ա փոխ աւետարանաւ և Աստուած անեղ և Քրիստոս որդի ասէք յիշատակ դնօղին, և աւետարանիս գրողին հոգւոյն Ա Հայր մերիւ յիշեսջիք։ Եւ այն որ ուստան է ի տուրս պարգեւաց՝ հատուսցէ ձեզ զփոխարէնն. և Քրիստոսի փառք յաւետեանս. ամէն։ Գրեցաւ թվին ՌԾԼ; օրն շաբաթ։ [Առ Մխիթ. Վիենայ]։

1607–8·

Մեսրոբ վարդապետիս Կաֆացի աշակերտ Տեառն Յոհաննէս կաթողիկոսի Սիս աթոռոյ, որ գծագրեցի զայս դժուար և խրթին մատեանս տումարական արհեստից մեկնութիւնս, ինձ և ծնողաց իմոց յիշատակ բարի՝ ի դրունս սուրբ եկեղեցւոյ. զի կար իմ այս էր. զի մինչ «ի նահանջն այսպէս արա», ես